ՄԱՄՈՒԼ

«Հորիզոն» թերթը իր վերջին երկու համարում, յիշեցնելով որ 1912 թուին լրանում է հայերէն առաջին անգամ տպագրված գրքի հրատարակութեան 400-ամեակը, առաջարկում է հիմնել ի յիշատակ կուլտուրական այդ մեծ տօնի մի ֆոնդ՝ հայոց գրականութեան համար։

Գրական ֆոնդ հիմնելու գաղափարը նոր գաղափար չէ. քանիցս այդ հարցը հրապարակի վրա է դրվել։ Եւ, ի հարկէ, գրական ֆոնդի հիմնարկութիւնը՝ հայկական տպագրութեան 400-ամեակի հետ կապելը գեղեցիկ միտք է։ Միայն պէտք է աշխատել այդ գաղափարը իրագործել այնպէս, որ գրական ֆոնդն ևս չենթարկվի համանման մի քանի ֆոնդերի չարաբաղդ բաղդին։

Ուրեմն, համակրելով ըստ ամենայնի գրական ֆոնդ հիմնելու գաղափարին, ի յիշատակ հայկական տպագրութեան 400-ամեակի, մենք խորհուրդ ենք տալիս, որ այդ գաղափարը իրագործվի հետևեալ ձևով։ Քանի որ Կ. Հ. Բ. Ընկերութիւնը մի սոլիդ և ճնայուն հաստատութիւն է, քանի որ Ընկերութիւնը իր 30-ամեայ գոյութեան յօբելեանի առիթով մտադիր է մի որևէ հիմնաւոր ակտով տօնել այդ դէպքը, մենք կառաջարկէինք, որ գրական ֆոնդը կազմվէր Կ. Հ. Բ. Ընկերութեան կից, այսինքն որ բոլոր նուէրների հաւաքողը և կենտրոնատեղին լինէր այդ Ընկերութիւնը, որպէսզի նուիրատուները հաւատով ուղղէին իրանց նուէրները։

Եթէ ֆոնդի կազմութիւնը հէնց սկզբից չը դրվի այնպիսի հիմքերի վրա, որ անհնարին դարձնէ նուէրների չքացումը, այդ դէպքում դժուար թէ գրական ֆոնդը աջողութիւն գտնի։ Իսկ Կ. Հ. Բ. Ընկերութիւնը ամենայարմար և վստահելի հաստատութիւնն է, որ կարող է իրագործել այդ գաղափարը։

Կամ պ'տք է հիմնել մի յատուկ ընկերութիւն, որը և տէր դառնար գրական ֆոնդին։